ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ՈՐՈՇՈՒՄ

<<16>> նոյեմբերի 2023թ. N ՄՈ/743 -Ա

ք. Արմավիր

## «ԱՐԳԻՆԱՅԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ » ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՆԱՐԻՆԵ ՄԱՐԿՈՍՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160-րդ և 164-րդ հոդվածներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 1-ին կետը և Նարինե Մարկոսյանի 2023 թվականի նոյեմբերի 15-ի դիմումը.

ո ր ո շ ո ւ մ ե մ՝

1. «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Նարինե Մարկոսյանին տրամադրել ամենամյա հերթական երկարացված արձակուրդը 2023 թվականի նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 20-ը ներառյալ՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Նարինե Մարկոսյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Արուսյակ Ասլանյանին:
3. «Արգինայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի տեղակալ Արուսյակ Ասլանյանի աշխատավարձի վճարումը 2023 թվականի նոյեմբերի 16-ից դեկտեմբերի 20-ը ներառյալ իրականացնել տնօրենի պաշտոնային դրույքաչափին համապատասխան:
4. Նարինե Մարկոսյանին աշխատանքի մեջ համարել 2023 թվականի դեկտեմբերի 21-ից:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 16.11.2023 14:59:33 GMT+4

Подписано: AVETISYAN ARNAK 2714860109

ՄԱՐԶՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ,

ՄԱՐԶՊԵՏԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ